# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Փետրվարի 1-ին, կիրակի. - Գ. կիր. զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նարեկ աբեղա Ավագյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Զի հաց յԱստուծոյ է, որ իջանէն յերկնից եւ կեանս տայ աշխարհի» (Յովհ. Զ 33) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 30):

Հավարտ Ս. Պատարագի, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

***Փետրվարի 8-ին, կիրակի. - Դ. կիր. զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «...զի որ հաւատայ՝ ընդունի զկեանսն յաւիտենականս» (Յովհ. Զ 47) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 32):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Փետրվարի 14-ին, շաբաթ. - ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ: Տօն քառասնօրեայ գալըստեանն Քրիստոսի ի տաճարն:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Երուսաղեմի հայոց Պատրիարքության Ս. Հակոբյանց վանքի միաբան Տ. Պարետ վարդապետ Սարգըսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 35):

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց նորապսակների օրհնության կարգ:

***Փետրվարի 15-ին, կիրակի. - Ե. կիր. զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշեն աբեղա Սանոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Սուրբ Պատարագից հետո, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի միաբան Տ. Մանվել վարդապետ Երկաթյանի հոգու հանգստության համար:

***Փետրվարի 17-ին, երեքշաբթի. - Սրբոց Ղեւոնդեանց քահանայիցն:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովհաննես քահանա Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Տեր Հայրը «Այս հավատից մեզ ո՛չ ոք չի կարող խախտել՝ ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը և ո՛չ հուրը, ո՛չ

ջուրը և ոչ էլ որևէ այլ դառը հարված» (Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 38):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Փետրվարի 19-ին, հինգշաբթի. - Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երեսուն եւ վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Հընթացս Սրբազան Պատարագի կատարվեց քահանայական ձեռնադրություն, հավարտ որի Սրբազան Հայրը «Երանի՛ է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն և իմ պատճառով ձեր մասին ամեն փեսակ չար խոսք՝ սուտ ասեն» (Մատթ. Ե 11) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 41):

«Հայր մեր»-ից առաջ կատարվեց Հայրապետական մաղթանք՝ Նորին Վեհափառություն Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության տոնի առիթով:

***Փետրվարի 22-ին, կիրակի. - Բուն Բարեկենդան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մեսրոպ աբեղա Պարսամյանը: «Հայր մեր»-ից առաջ «Ցորում ցնծայր զուարթութեամբ, անփխրական խնդութեամբ...» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը (տե՛ս էջ 44):

***Փետրվարի 29-ին, կիրակի. - Բ. կիր. Քառասնորդական պահոց (Արտաքսման):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հայրիկ աբեղա Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանը «Ջղառնութեան պտղոյն ճաշակ, որով մեռաք արդարութեան պահելով քո քառասնօրեայ՝ փոխեցեր ի քաղցրագոյն օրինաց քոց ճաշակումն» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 47):

Հավարտ Ս. Պատարագի, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ Հունգարիայում նենգորեն սպանված հայ սպայի՝ Գուրգեն Մարգարյանի հոգու խաղաղության համար:

***Մարտի 7-ին, կիրակի. - Գ. կիր. Քառասնորդաց պահոց (Անառակին):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եղիշե վարդապետ Ավետիսյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 51):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Մարտի 14-ին, կիրակի. - Դ. կիր. Քառասնորդական պահոց (Տնտեսին):*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տիրան աբեղա Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Պարետ վարդապետ Սարգսյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 54):

*Մարտի 21-ին, կիրակի. - Ե. կիր. Քառասնորդական պահոց (Դատաւորին):*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իգնատիոս աբեղա Մալխասյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 57):

Հավարտ Ս. Պատարագի, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի նախկին դասախոս Սիմոն Հովիվյանի հոգու հանգստության համար:

*Մարտի 27-ին, շաբաթ. - ԼԴ. օր Մեծի պահոց: Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ելից ստեղ չարչարանացն եւ ի մտին ի Վիրապն:*

Այսօր Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նարեկ աբեղա Ավագյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Հրաշափառ Աստուած, եւ միշտ բարեխնամող, ի Պարթեւական մեղապարտ ազգէն լուսաւորիչ մեզ շնորհեցեր...» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի մեր հավատո հայր Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքով կատարվեց ձեթի օրհնություն:

*Մարտի 28-ին, կիրակի.- Զ. կիր. Քառասնորդական պահոց (Գալստեան):*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Արշակ վարդապետ Խաչատրյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 59):